

Գուցէ ընթերցողը կարծում է որ մենք հնարում ենք, որ մենք ինքներս խելագարվել ենք... Եթէ մեզ չէք հաւատում, կարդացէք ռուսաց «Голосъ» լրագիրը, կարդացէք անգլիական «Daily News» լրագիրը...

Լրագիրները հաղորդում են որ թիւրքաց հայերի բազմաթիւ ընտանիքները վերջին յուսահատութեանը հասած՝ պատրաստ են կրօնափոխ լինել իսկ մեր սեփական թղթակիցները Պարսկաստանից հաղորդում են մեզ որ Հայաստանի բազմաթիւ բնակիչները փախչում են դէպի Պարսկաստան:

Հուտով Հայաստանը բոլորովին կը դատարկի հայերից:

Եւ այս է ցանկանում թիւրքիան: Եւն ժամանակ ոչնչացած հայերի տեղ, Բ. Գուրը կը բնակեցնի Հայաստանում արիւնարբու չէրկէզներին և բարբարոս քիւրդերին:

Մի և նոյն ժամանակ մեզ տեղեկացնում են որ կովկասեան բազմաթիւ լեռնաբնակ մահմետականներ անդադար փախչում են կովկասեան սարերից և զետեղվում են Հայաստանում...

Ուրեմն մի բանի տարուց յետոյ կարելի կը լինի Հայաստանը աշխարհիս երեսից բոլորովին ջնջված համարել կարելի կը լինի Հայաստանը միմիայն լոկ աշխարհագրական և պատմական անուն համարել...

Ուշադրութիւն ենք դարձնում այդ սարսափելի երևոյթի վրա Կ. Պօլսի դարդակազուխ հոստաներին, այդ տխմար ազգասէրներին, որոնք զբաղվում են ազգային ժողովի ատենաբանութիւններով, զուարճանում են կրօնական վէճերով և վիճում են, միմեանց միս ուտելով ինչ անուն տան միացած ընկերութիւններին...

Իսկ մեր կովկասեան հայերի մասին, որոնց միակ նպատակն է միմեանց վնասել, մենք արժանաւորութիւնից ստոր ենք համարում խօսելն անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

SUSO ՅՈՒՆՈՒԿԻՉԷԻ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻՎ:

Յունվարի 28-ին, երկուշաբթի օրը կատարվեցաւ Քիւրդիսի հայոց գերեզմանատան ետե գտնված գաշտի վրա երկրիս հոչակաւոր աւազակ Տատո Յուլուկիձէի մահուան պատիժը. ժողովրդի մի ահազին բազմութիւն վաղօրօք շրջապատել էր կախաղանի շուրջը, որ գտնվում էր հայոց գերեզմանատան ետեը, և այն փողոցի ընդարձակ տարածութիւնը, որի վրայով պէտք է անցկացնէին մահապարտին. եղանակն այնչափ ցուրտ չէր, և ամբոխի բազմութիւնը զարդարված էր նրա գեղեցիկ սեռի անդամներով:

Ժամը 10-ից երեք քառորդ անց էր, երբ հեռաւորութեան մէջ ամբոխի բազմութեան մէջից երևաց մահապարտի կառքը: Կարմիր զգեստով դահիճը, ձեռքը դրած իր զոհի վրա, մի առանձին Հպարտութեամբ նայում

թիւն: Եւ չեմ կարող հաւատալ այդպիսի ցնորքի:

—Ո՛հ, ո՛չ, Գէորդեան, դու շատ մուսլ հայեացքով ես նայում հայի վրա... գոչեցին զանազան կողմերից և վէճը առաքացաւ:

Այսպէս խօսում էին զանազան անկիւններում, մինչև եկան մնացածները:

—Փառք Աստուծո՛ւ, տղայք, ասաց առաջ եկանք մեկը, վերջապէս մենք հաւաքվեցանք, կարծեմ կարող ենք սկսել մեր գործը:

Աշտին ընտրեցին նախագահ, որ հսկէ կարգապահութեան վրա. նա յայտնեց իւր շնորհակալութիւնը այդ բարձր պատի համար և յարգանքով նստեց սեղանի մօտ դրած նախագահական բազկաթոռի վրա Բարձրացաւ հարց հայերէն խօսել, թէ ուսեբէն:

—Իմ կարծեօք, խօսեց հայազէտներին մէկը, այստեղ հայերէն խօսելը մեզ համար մինչև անգամ բարոյական պարտաւորութիւն է: Ամբողջ տարին այնքան խօսում ենք ուսեբէն, որ լեզուաւոր զէպք չէ լինում. եւ միթէ այժմ ես մենք, ազդի յառաջագնացներս, նորա յոյճ, նորա նպատակների և ձգտումների ներկայացուցիչներս, որ պարտաւոր ենք օրինակ լինել ուրիշներին համար, դարձեալ պիտի հրաժարուենք մեր մայրենի լեզուից և կորստանք օտար բարբառ:—Հասերը համակրեցին այդ հայեացքին և ջերմեանով սկսեցին պաշտպանել այդ առաջարկութիւնը, թէ և քստ մեծի մասին մայրենի լեզուի պաշտպանները խօսում էին ի բոլոր սրտէ, բայց նոցա թէում կային և այնպիսիները, որոնց նպատակը այլ էր:

Գործով նրանք կամենում էին փակել լեզուն այն ուսանողներին, որոնք վատ կամ բոլորովին չէին խօսում հայերէն և այսպիսով հարկադրել նրանց լուռ մնալ: Սրանք իրանց կողմանէ դեբում էին փաստեր, հերքում էին առաջիններին և պահանջում էին խօսել ուսեբէն, կրք մի կէս ժամ այդ մասին բաւական զուլս ցաւացրին և ազնուկը սաստկացաւ, բարձրացաւ իւր տեղից Ա-

էր շրջապատող ամբոխի վրա: Ժամը ուղիղ 11 էր, երբ զինուորներով ուղեկցված կառքը կանգնեց կախաղանի առաջ. մահապարտին իջեցրին կառքից, և շրջապատող աստիճանաւորներից մէկը ներկայացրեց նրան մի ծխախոտ, որը մահապարտը ընդունեց մի առանձին շնորհակալութեամբ: Նրա դալկացած դէքի վրա ոչինչ զգալի արտայայտութիւն չէր նշմարվում: Միայն մի ընդհանուր յուսահատութիւն յայտնում էր, որ այդ մարդը հասել է իր սե օրհասին. երբեմն երբեմն մահապարտը վրաց լեզուով մի քանի խօսքեր էր ուղղում իր մօտ կանգնած քահանային, որը նրան պատասխանում էր բոտ երեկոյթին միութարական խօսքերով:

Գատալձիւրը կարդացվելուց յետոյ, մահապարտը Աստուծուն վկայ բերեց, որ նա արդար է, և համբուրեց աւետարանը:

Այդ միջոցին դահիճը մօտեցաւ նրան և հազցրեց սպիտակ երկար շապիկը, բայց մահապարտի ցանկութեամբ՝ այս անգամ սովորականին պէս, նրա երեսը չը ծածկեցին:

Պատուանդանի վրա բարձրանալու միջոցին, նա խնդրեց որ նրա շղթաներն արձակեն, ասելով, որ դա օրէնքին դէմ է, բայց չը նախելով աստիճանաորների համաձայնութեանը կատարել նրա այս վերջին խնդիրը, այդ նրանից շաջողվեցաւ, որովհետև անհնաւորութեամբ էր, թէ անհոգութեամբ, բանալին չէին վերցրել: Պէտք է ասել, որ շրջապատողներից շատերը սաստիկ զայրացան դահիճի դէմ, որը իր անաջողակութեամբ, թողը շատ վատ զցեց մահապարտի վիզը, և դրանից մահապարտը իր վերջին հոգեվաքի մէջ երկու անգամ բացականչեց, որ ուղղեմ թողը:

Կախվելուց յետոյ, մահապարտը մի քանի ջղային ցնցումներ արաւ, և նա արդէն յաւելոնական թաղաւորութեան մէջն էր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսկաստանից ստացած մասնաւոր նամակներից մենք տեղեկանում ենք, որ թիւրքաց Հա-

չուրը—Պարսկայք, ասաց նա, խօսք չը կայ, որ ամենայն մարդու համար մայրենի լեզուն խօսելը ոչ միայն բարոյական պարտք է, այլ և հարկաւորութիւն. որովհետև առանց նրան անկարելի է ճանարիտ զարգացում. իրաւացի է և այն, որ մեզ

—հայերիս այդ սրբազան պահանջը աւելի հարկաւոր է քան մի այլ ազգի. որովհետև դա միակ միջոցն է, որով կարող ենք դեռ ես պահել մեր ինքնուրոյնութիւնը օտար ազդութեանց մէջ. ես յուսով եմ, որ այստեղ հաւաքուած մեր ընկերները այդ լուր զգում են և հասկանում. բայց այս րօպէիս մեր նպատակը այդ չէ. դրանց համար կայ առանձին միջոց և ժամանակ. իսկ այժմ մեզ հարկաւոր է քննադատութեան ներթափանց մի քանի անձնական աւօրեայ հարցեր և որ ամենը ես լուր դիտեն հարցը և յայտնեն իրանց դատողութիւնը, հարկաւոր է մի այնպիսի լեզու, որ ամենքին հասկանալի լինի—այդպիսին է աւսեբէնը:

Փոքրիկ հակաճառութիւնից յետ ընդունեցին Աշտի առաջարկութիւնը և սկսեցին խօսել ուսեբէն: Այն ժամանակ նախագահը առաջարկեց հետեւել հարցը, ինչ պիտէ ներկայացնել յօգուտ չքաւոր ուսանողներին, ինչպէս սովորութիւն է ամեն տարի, ընդհանր. թէ թե՛ պօս:

—Նախ քան սկսել վիճարկութիւնները, հարկաւոր են համարում մի երկու խօսք ասել, ասեց Աշտը, ինչ որ վերաբերվում է պիէսաների արժանաւորութեանը. նրանց կենսական և բարոյական նշանակութեանց, այդ ի հարկէ ձեռ համոզմանց գործն է. բայց գործնական կողմից աւելորդ չէ նկատել, որ կատարելագործեան համար շորիղէն և այլ ծախսերը կրկնապատիկ արժան են: Բայց մի և նոյն ժամանակ թե՛ պօսի համար հարկաւոր են երկու կանայք, որոնց բաւական դժուար է զբոնել:

—Եթիօ, ես բան չեմ տեսնում, ամպը յետ քաշի, ասում էր այդ րօպէին մի ուսանող մեծաքիթ Նիկողոսին, որը իր քթով բռնել էր լոյսը: —Եղանակը պարզ է, լուսամուտները են վատ

յատասանի բազմաթիւ ընտանիքներ, փախչելով անասելի սովից և անտանելի հարկերից, թողնում են իրանց հայրենիքը և յուսահատված դիմում են դէպի Պարսկաստան:

ԱՍԱԼՅԻԱՅԻ մեր սեփական թղթակիցը հեռագրում է մեզ հետեւեալը յունվարի 28-ից: «Երէկ մի մեծ տօնախմբութեան ժամանակ ուղեորված ծափահարութիւններով ընդունվեցաւ հայր Գարեգինի միջոցը հաստատել այստեղ մի մշտական հիմնական դրամագումար ՎՄՅԿԻ և ՎՄԵՂԻ Հայաստանի լրագիրները պահպանելու համար: Իսկոյն ամեն կողմից թափվեցան առատ նուիրատուութիւններ, Գործի աջողութեան մասին կատարած անգամ չէ կարող լինել:»

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ այդտեղ սաստիկ ցրտերի և վառելիքի պակասից շատ մարդեր պարտաւորվել են մէջ դատաւորութիւնը ընդհատված է առժամանակ:

Մեր մշտական թղթակիցը ԵՐԵՒԱՆԻՑ հաղորդում է մեզ հետեւեալը: «Երէկ հարկաւորը բարեհաճեց 100 խալվար ցրտն ծախել Երևանի սովատանջ ժողովրդի վրա, 80 բուրջ խալվար:»

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ որ այս օրերս մի գիւղացի երիտասարդին Շուշու ճանապարհի վրա սպանել են վիզը կարելով և նրա մօտ եղած մի քանի հարիւր բուրջ փողը տարել են: Չարագործները դեռ յայտնի չեն:

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են որ յունվարից սկսած սաստիկ ցրտեր է անում այդտեղ և որ ծաղիկ հիւանդութիւնը շատ սաստկացել է Շուշու և նրա շրջակայքում, այնպէս որ մինչև անգամ հասակ առածները զոհ են գնում այդ ցաւին:

ԿԻՐԵՆԻՑԻՑ գրված նամակից, որ ՎՄՅԿԻԻ հետեւեալ համարներում կաշխատանք ամբողջութեամբ փոքրել, քաղում ենք հետեւեալ լուրը: Գեկտեմբերի 21-ին, անցեալ թիւ, Կերեւնուում կայացաւ սիրողների մի հայոց ներկայացում: Խաղացին Սուսուկեանցի Վրաթաբալա և Օսկան Պետրովիչ պիէսաները: Ներկայացումն, որից զոյացաւ 100 ր. 50 կօպ, զուտ արդիւնք, տրվեցաւ յօգուտ Մարիաման օրիորդական դպրոցի:

Լոյս տալիս, պատասխանեց Նիկոն: Առաջին պարտը թոյլ էր աչքերով:

—Պարոններ, սրախօսութեան ժամանակ չէ, շարունակեք գործը, նկատեց նախագահը:

—Ինչ որ վերաբերվում է կանանց, խօսեց Գեորգեանը, մենք աչքի առջև կարող ենք ունենալ երկու աղիւ օրիորդներին, որոնք մինչև այժմ վանք չեն փախտել ուսանողական օգուտ համար և ես յոյսով եմ, որ նրանք այս տարի ես, նոյնպէս անձնագործ կը լինեն, ինչպէս և առաջ: Ես առաջարկում եմ, առանց այլախոյնութեան, ընտրել կատարելութիւնը, մի կողմ գնելով միւս յարմարութիւնները, միայն այն պատճառաւ, որ ծախք փողը է. այդ համապատասխանում է մեր ներպատակին—որքան շատ եկամուտ և փողը ծախս այնքան և լուռ: Թողութեւրդը այնքան յիմար չէ, որ այդ չը հասկանայ և այս պատճառաւ չէ կարող պահանջել մեզանից արհեստական հատուցում այդ գործում:

—Ես չեմ կարող համարել այդ հայեացքին, ասաց մէկը, ի՞նչ մենք ժողովրդից առնում ենք փող, փոխարինապէս պիտի աշխատենք տալ նրան այնպիսի մի զբաղմունք, որ փողը ի շատե բաւականացնէ նրա ճաշակը: Մեզ հարկաւոր չէ ողորմութիւն:

—Ինչ ողորմութիւն, գոչեց զայրացած Գէորգեանը, մեծ բան է, որ տարին մի անգամ մի երկու բուրջի պիտի հանեն իրանց ծանրակշիւր քաւիկից շատ անգամ իրանց ամենամօտիկ ազգականներից մէկին օգնելու համար. մինչդեռ հարկաւոր պատիկ աւելի ձգում են իրանց անասական հեշտատարութեանց համար: Ճշակ էք ասում գոք շարունակեց նա արհամարհական ձեռով, այն ժամանակ վարձեցէք երկու պանդոկի երգչուհի, որ կրկին նրանց համար, կամ կարդացէք թե՛ զգալի պատմութիւնը և հաւատացէք որ դժբախտ նրանք աւելի բաւական կը լինեն, քան ձեր ամենալաւ ներկայացումներով:

(Կը շարունակվի)

*) Յայտնի բոլիչ հոգեկան հիւանդութեանց: Մ. Որքան և անհաւատալի և անբնական թուր պատմածս, այնուամենայնիւ այդպիսի անցքեր ոչ սակաւ պատահում են զարգացած ուսանողների շրջանում:

Մեզ հարգուեմ են ՋԱԼԱԼ-ՕԳԼԻՈՒՑ հետեւալը, յունվարի 21-ից, Այս քանի օրերու մէջ քանի է իր ցորենի ամբարները և ծախում է ցորենը ժողովրդին մատչելի գներով, այնպէս որ բոլորովին դիտարկութիւն չունի որ և է չափ ստանալու, այլ միայն իր արած ամենամեծագոյն ծախսերը դուրս բերելու: Ինչպէս յայտնի է Փամբակի և Լոսու կողմերի ժողովուրդը սովի մէջ է, ուրեմն հասկանալի է թէ ինչի ժողովուրդը սաստիկ երախտապարտ է պ. Քալանթարեանցին, որ բոլոր ուրիշ ծախողներէն է ծախում ցորենը ազգատ ժողովրդին:»

ԹԻՖԼԻՍԻ ռուս լրագրներում կարգում ենք որ ներքին տարվայ մեծ պատին մի քանի պարսկներ դիտարկութիւն ունեն ռուսներէն, հայերէն և վրացիներէն լեզուով հրապարակական դաստիարակութիւններ կարգալ Թիֆլիսի Գործակատարների կըլուբում:

ԱՍՏԻՑԻՍԻ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրներից լուծ ենք, որ Թիֆլիսի առաջնորդ Գարբիէլ արքեպիսկոպոս Ալվազեանի աշխատութեամբ «Մարցայ անուանված հողը, որ 19000 դեստարինից աւելի տարածութիւն ունի, յատկացրել Ա. Էջմիածնին: Բացի այդ սրբազան Ալվազեանի Հաղորդների վանքի վանասօր Պողոս վարդապետ Մարգարեանի աշխատութեամբ 40000 դեստարինիս անտառով ծածկված հող է սեփականացրած Էջմիածնին:»

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ, որ հացի պակասութիւնը շատ զգալի է: Հարուստները աղքատների մասին չեն հոգում. Քաղաքի մէջ մեծ քանակութեամբ հաց կայ, բայց նրա գինը հետզհետէ բարձրանում է:

Պ. Յ. Տէր-Ղրղիբեան խնդրում է մեզ յայտնել, որ իր հեղինակած «Վէպեր» վերնագրով գիրքը արդէն ստացել է կազմարարից և մինչև փետրվարի 10 կուղարկվի դրէ բոլոր բաժանորդներին:

Հինգշաբթի յունվարի 31-ին, ԹԻՖԼԻՍԻ Ամբարային թատրոնում լինելու է պ. Ալալեանի բենեֆիտը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՐԱՆՍԻԱ

Փարիզի բժշկական: Համալսարանում բժըլկապետ Բորէն մի շատ հետաքրքիր փորձ է արել մի զլետտոված մարդու դիակի վրա. ահա թէ ինչու մէ է կայանում այդ փորձը:

Պրէֆօ մարդասպանին զխտակուց յետոյ նրա դիակը բերին բժշկական Համալսարանը, որտեղ բժշկապետ Բորէնի կարգադրութեամբ, զլետտովածի զուտը կապելով՝ միացրին մարմնուտ հետ, և իւրաքանչիւր ուղի վրա գրին էլէքտրական թելեր. էլէքտրական հոսանքը թողնելու միջոցին, մարմնու վրա ոչինչ շարժում չը նշմարվեցաւ. թելերը գրվեցան ծնկների վրա, և սրանից միայն մի քանի աննշան ցնցումներ առաջացան. վերջապէս երբոր էլէքտրական թելերը գրվեցան դիակի ստամոքսի վրա, այն ժամանակ անսպասելի ու զարմանալի երեւոյթներ առաջացան. դէմքի դժգոհութիւնը սկսեց խաղալ, աչքերը գլորեթէ ողջ մարդու աչքերի դրութիւն ստացան, ակննջները շարժվում էին և Պրէֆօի ամբողջ մարմնը, մի սարսուխելի յուզմունքի ներթարկված մարդու մարմնու նման, ներթարկվեցաւ ջրային սաստիկ ցնցումներին:

Այս հետաքրքիր փորձերին ներկայ գտնվող բոլոր բժիշկները հաստատում են, որ բոլոր այդ նշաններն ապացոյց են, որ մահը քայքայական է եղել: Այս փորձերից մի ժամ յետոյ, բժշկապետ Բորէն սկսեց դիակն անդամաւորել (disséquer):

Իհունում, Պէրրաշի գաղի գործարանում աշխատող բոլոր մշակները զազարեցին աշխատելուց, խնդրելով, որ նրանց ուժիկներն աւելացվեն: Միւս օր առաւօտը մի խումբ ուրիշ մշակների արդէն շարունակում էին իրանց նախորդների թողած գործը:

Լէդ Ալպ Մարիամ կոչված նահանգի քրքրեական դատարանում մի անակնկալ դէպք պատահեց. մի գործի քննութեանից յետոյ, երբ նախագահ պ. Ալապիէ արդէն վերջացրել էր իր եզրակացութիւնը, այն ժամանակ անդամներից մէկը կամեցաւ մի նկատողութիւն անել, բայց նրան առաջին որ արդէն ուշ է, և թէ նախագահի եզրակացութեանից յետոյ, ոչ որ այլ ևս իրաւունք չունէ նկատողութիւններ կամ առաջարկութիւններ առնել: Պ. Ալապիէ—նկատողութիւն անող անդամը—սկսեց իր ասածը, և յայտնեց, որ նրա խղճմանը իրան թող չէ տալի ստորագրել դատավճիռը, որովհետեւ գործի քննութեան մէջ մի կէտ կայ, որը նրա կարծիքով կատարելի կերպով չէ բացատրված. նրան նկատեցին, որ նա ժամանակը կորցրել է, և պահանջեցին ստորագրել վճիռը. նա պատասխանեց, որ արդարութեան համար ոչ մի ժամանակ կորած չէ, և սկսեց իր ասածը. միւս դատարանները ստիպեցան զիջանել և միասին նորից մասն խորհրդի դաշխմը: Տարբ քայլի վիճարանութեանից յետոյ, քրէական դատարանը ոչնչացրեց իր վճիռը և յետագայ նոյն գործի քննութիւնը յետագայ նիստին:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՅԻՑ
Կ. Պօլիս 14 յունվարի

Թէր ճեմանը-է Ք. ք. և ար հայ թերթի դատատանը ընդդէմ թերթը Վ. ա գ թ թերթի կարծին ազգային խնդրոյ մը կերպարանքը կանուտ Նախորդ նամակաւ մը բացատրած էինք սոյն դատատանի պատճառներն, և թէ Վ. ա գ թ գծուարութեան մէջ էր իրեն փաստաբան մը գտնելու, վերջապէս կարկուր անուն սիրելացի մը կը գտնէ, որոյ համար «Levant» կասէ Soi-disant փաստաբան:

Հայ, յոյն և թիւրք ժողովուրդեան խուռն բազմութիւն մը գրաւած էր դատարանը: Հայ փաստաբաններն կարգացին իրենց ամբաստանագիրն ընդդէմ Վ. ա գ թ, որոյ ի պատասխանի պ. կարկուր ինքն ամբաստանողի գեր ստանձնեց ընդդէմ հայ թերթին: Պ. կարկուր կամբաստանէ զԹէրճեման թէ շարունակ հայ ժողովուրդը կը գրգռէ, թէ կը գրէ որ բարեկարգութիւններն երազներ են, թէ հայ ժողովուրդը իւր ցաւաց պատճառներն ինքն պարտի բառնալ գէնքով և թէ Պուլզարիստան պէտք է հայոց օրինակ մը լինի: Պ. կարկուր ի հաստատութիւն իւր խօսքերուն հայ թերթին խել մը հատուածներ կը կարդայ, զանոնք այնպիսի կարգով մը շարելով որ կապակցութիւն չունենան. Թէրճեմանի փաստաբաններն որ չէին կարծեր թէ թիւրք թերթ մը մատնիչ լինելու շտի յառաջ կերթայ, այս տեսակ վատութեան մը յառաջ բաւական զփուրութեան պատճառն, և պատասխանեցին թէ հայ թերթին զբրածներն թէ որ կառավարութեան վնասակար լինելն, անուշտ տպագրական տեսլութեան գրասենեակն որ այնքան խտուրթեամբ կը հսկէ թիւրքերու վրա, մինչև ցարդ պէտք եղած պատիժ անուշտ կը տնօրինէր, հետեւաբար այդ յողուածներու մէջ տէրութիւնն գրգռել ոգի մը չէ նշմարած, որ ձայն մը չը հանէր, ուստի պատժական դատարանը միջամտելու իրաւունք չունի: Պ. կարկուր աւելի յառաջանալով առաջից թէ Թէրճեման ինքնաբերաբար չը գրեր այդ յողուածները, այլ հայ յեղափոխական քօմիթէի մը օրգանն է. մեծ յուզմունք արեց և ներկայ գտնուող կանուտար անձինք կամակէն այսպիսի ցած ոգի կրող թերթի մը վրա, լուս Վ. ա գ թ պէտք էր այս խնդրին, ընդհանուր դատախազին յանձնել ի քննութիւն: Եւ թէպէտ Թէրճեմանի փաստաբաններն ցոյց տուին թէ դատական այս ընթացքը ապօրինաւոր է, բայց ոչ մտիկ կանէ: Ուստի խնդրին յանձնուեցաւ ընդհանուր դատախազին (procureur général): Յիշեալ պաշտօնեան յունվար 4-ին կը ձերբակալէ պ. ձիվէլիկեան Թէրճեմանի տնօրէն-խմբագրապետը, և պ. Սազայեան Սրտաճառէրը, և զանոնք բանտը կը նետէ: Կ. Պօլսոյ մէջ բաւական յուզմունք արեւած է. Հայ, եւրոպացի, յոյն, թիւրք թերթերն մեծ սիւնակներ կը նուրբեն այս խնդրին, և բացի թիւրք թերթերէն ամենքն ալ Թէրճեմանի պաշտպաններն են: Պատրիարք Արքայանք Բ. Գուռը թագիր մը գրեց այս խնդրոյ մասին, և կարծեմ պ. ձիվէլիկեան և Սազայեան արտաքին մեծամեծ պաշտպանութիւններ պիտի վայելեն: Առ այժմ ընդհանուր համակրութիւն մը տիրած է այս թերթի մասին:

Այս համակրութիւնը ի վաղուց կար, բայց այժմ մեծցաւ: Թէրճեման զեռ մի քանի տարի է որ սկսած է հրատարակուել, Վարդան բաշայի գրիչը նորա փայլ կուտար, և նորա մասէն յետոյ երկուտարադ խմբագիրներ ունեւաւ որ նշանաւոր յողուածներ կը հրատարակեն: Ազգային ներքին խնդրոց մէջ գրեթէ չէ զոք զիբ մը ունի այդ թերթն և ընդհանրապէս կը զոհանայ տեղեկութիւններ հարցողներով. իսկ ազգային արտաքին խնդրոց մէջ գործուն դեր մը ունի, շատ դառն և կծու յողուածներ կը հրատարակէ, Հայաստանէն ունի նշանաւոր թղթակցութիւններ և կառավարութեան զեղծմանց դէմ արիաբար կը յարակի: Այս կարեւոր է դատաստանի արդիւնք հետզհետէ կը հարցողներ: Առ այժմ մեր թերթերու արդելուած է հարստահարութեանց վերաբերեալ թղթակցութիւնք և այն հրատարակել:

Ուրիշ մեծ դատատան մ'ալ որ ուղղակի մեղ էր վերաբերեր, այն է Ամէտ Հօճայի դատատանը. պահ մը կարծեցինք թէ վերջացաւ, բայց այժմ կիմանաւք թէ անգլիական դեսպանատան և Բ. Գրան մէջ բանակցութիւնք կը շարունակին, խղճի ազատութեան խնդիր մը կը յուզուի, եւրոպացիք որ կը կարծէին թէ այս խնդրն տաճկաստանի համար լուծուած է, այժմ կը տեսնեն թէ քանի ստոյգ է հայ պաշտօնական բարձրագոյն անձի մը գրած այն խօսքն թէ ճաճկաստանի մէջ խղճի ազատութիւն կը նշանակէ քրիստոնէից խղճութիւն ընդունելու ազատութիւն և մէկ եկեղեցիէ ուրիշ եկեղեցի յարիլ, բայց ոչ թէ խղճաց քրիստոնէութիւն ընդունելու ազատութիւն:

Ուրիշ մեծ դատատան մ'ալ որ ուղղակի մեղ էր վերաբերեր, այն է Ամէտ Հօճայի դատատանը. պահ մը կարծեցինք թէ վերջացաւ, բայց այժմ կիմանաւք թէ անգլիական դեսպանատան և Բ. Գրան մէջ բանակցութիւնք կը շարունակին, խղճի ազատութեան խնդիր մը կը յուզուի, եւրոպացիք որ կը կարծէին թէ այս խնդրն տաճկաստանի համար լուծուած է, այժմ կը տեսնեն թէ քանի ստոյգ է հայ պաշտօնական բարձրագոյն անձի մը գրած այն խօսքն թէ ճաճկաստանի մէջ խղճի ազատութիւն կը նշանակէ քրիստոնէից խղճութիւն ընդունելու ազատութիւն և մէկ եկեղեցիէ ուրիշ եկեղեցի յարիլ, բայց ոչ թէ խղճաց քրիստոնէութիւն ընդունելու ազատութիւն:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ГОЛОСЪ» լրագրի մէջ կարգում ենք, զՕնդոնի «Daily News» լրագրին հետապրում են Կ. Պօլսոյ, յունվարի 23-ից հետեւալը. «Հայերը այն եղբակացութեանը հասան, որ Անգլիայի ապահոված վերանորոգութիւնները մի գուշ չարժեն, և այս պատճառով Երկու հազար ից աւել ընտան ի քննէր մէկ խնդրագիր ստորագրեցին և ներկայացրին Վիէնայի ռուսաց հիւպատոսին, որի մէջ թոյլ տուութիւն են խընդրում միանալ ռուսաց եկեղեցու հետ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը, այս բանի մասին տեղեկութիւններ ստանալով, անյապաղ ուղարկեց այնտեղ նախկին պատրիարք (?) Խորէն Նար-Բէլին (որը գնացել էր ԼՕնդոն և Բերլին որպէս հայերի ներկայացուցիչ), որ փորձ փորձի կանգնեցնել այս գործը: Երէկ, Կ. Պօլսում զանազան հարստահարութիւնների և բարբարոսութիւնների մասին հարցողած լուրերի պատճառով, կալանաւորվեցան և բանտարկվեցան հայերէն լրագրի հրատարակիչները: Եւ որովհետեւ այս լրագիրը պատրիարքարանի օրգան է, այդ պատճառով պատրիարքարանը իր պատասխանատուութեան վրա է ընդունում այդ լրագրի մէջ հարցողած լուրերի ճշգրտութիւնը: Հայաստանում քրիստի և թիւրքերի բարբարոսութիւնների վրա մէկ թշուառութիւն ևս աւելացաւ, այն է սովը: Թիւրքաց կառավարութիւնը Ռուսաստանից և Պարսկաստանից հայի բերելը արգելեց, իսկ հարկերը խտուր պահանջում է:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հրէական ստատիստիկա. Հրէական կըրօնը տարածելու համար կազմած Բերլինեան Բնակչութիւնը 1878 թիւ համար նորերումս մէկ հա-

չի հրատարակեց, որը հետեւալ թւերն է ներկայացնում. բոլոր երկրագնդի վրա տարածված հրէաների թիւը 6-ից մինչև 7 միլիոն է, այսինքն ուղիղ այնքան, որքան, հրէաների գիտականների երկարութեամբ, Գալիթ թագաւորի ժամանակներում էին Այս թիւից 5 միլիոն Եւրոպայում են բնակվում, 200,000 Ասիայում, 80,000 Աֆրիկայում, 1—1½ միլիոն Ամերիկայում: Եւրոպայում, ամենից բազմաթիւ հրէաներ Ռուսաստանում են ապրում, այն է 2,621,000 մարդիկ, Աստիկայում 1,375,000 մ., այդ թւում միայն Գալիցիայում 575,000 են, Գերմանիայում 512,000 հրէաներ կան, որոնցից Պրոսիանում 61,000 մարդիկ կան: Հոյանդիայում 70,000 հրէաներ, Անգլիայում—50,000, Ֆրանսիայում—49,000, Իտալիայում—35,000. Իսպանիայում և Պորտուգալիայում 2-ից մինչև 4000 հրէաներ կան. Ելիցիայում—1800. Նորվեգիայում 25 մարդիկ: Բերլինում ապրում են 45,000 հրէաներ, այսինքն համարաւ այնքան, որքան ամբողջ Ֆրանսիայում: Աֆրիկայում հրէաները մասամբ Ալժիրիայում են ապրում. բայց նրանք մինչև անգամ Հարէլատանում և Սահարայի օվաղիներում ևս պատահում են. աշխարհի այս մասում նրանք յաճախ ծառայում են որպէս միջնորդներ քրիստոնեաների և մասնատականների մէջ: Ասիայում, 20,000 հրէաներ Հնդկաստանում են բնակվում, 25,000 Պակիստանում: Եւրոպայում 13,500 հրէաներ են ապրում 7000 մասնատականների և 5000 քրիստոնեաների հետ միասին:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՌԱՅԻՆՆԵՐ

—ԱՍՏԻՍԻԱ. ***. Նամակը արդէն տրուված է: Եարունակեցէք գրել. ձեր թղթակցութիւնները բաւական հետաքրքիր են:

—ԱԼԷՔՍԱՆԻՔԱՊՈԼ. Ա. Ա. Տասն բուբլ Ա. Նշան եկեղեցու ծխական ռուսներանի բաժանորդագիրը ստացված է: Խնդրում ենք միւս անգամ պատուիրած կամ հասարակ նամակով փող չուղարկել: Փողերը ամենը պէտք է միշտ դրամական ծրարներով ուղարկել:

—ՀԻՆՆԱԿԻՅԻՆԱՆ. Օտարական. յունվարի 4-ից գրած նամակը հնացել է, այժմ չարժէ տպել: Եարունակեցէք գրել: Օրերումս ձեզ մի նամակ ուղարկեցինք:

—ՄԵՂԻՍ. Մ. Մենք չենք կարող ամեն տեսակ յողուածներ տպել միայն այն պատճառով, որ յողուածի հեղինակը կը գրի բաժանորդ «Մշակին»: Եարունակեցէք գրել, յարմար յողուածները կը տպենք, իսկ անյարմարները կը գցենք: Ամեն մարդ ամեն տեսակ գործի մասին չէ կարող գրել: Եթէ մենք տպում ենք մի թղթակցի որ և է նամակը, այդ չէ նշանակում, որ նրա բոլոր նամակները կը տպենք: Յանկարճ նոյն թղթակցից ստանուլ ենք մի նամակ, որից պարզ երևում է, որ այն գործը որի մասին գրում է, իրան բոլորովին անծանօթ է:

—ՄՕՍԿՎԱ. Ն. Ա. Ձեր յողուածները բոլորը տպված են, բացի մէկից, որ տարբարազբար չը կարողացանք տպել: Յաւում ենք, բայց մենք մեղաւոր չենք:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՎԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
ԿԱԿՈՒՏԱ, 28 յունվարի (9 փետրվարի)
Մուլա-Մուշապի-Ալիմ, որ Մահձոմէդ խանի հետ միասին գտնվում է Գաղիսում, հրաւիրեց անգլոսական ցեղերին նորից պատերազմ սկսել. այդ հրաւերին արձապանք տուին Կոզեստանցիները և Գիլգայնիները:
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ